53. ՊՈՉՈՎ ՊԱՌԱՎ

Կէլնի, չէլնի իրիկ-կնիկըմ: Կնիկ կմեռնի, կմնա էրկու ախչիկ ինան մարթ:

Ախչիկ կասի. - Բաբո՛, փսայվի, ինչի՞ չես փսայվե:

Խեր կասի. - Չուր իմ փողփըփե գյավազան գյեփին չառնի, իմ փողփըփե չարուխ չծայվի, ես չեմ փսայվի:

Քյանի որ խեր կիփեր որ ինքյ փսայվեր, պիփի խորթ մեր գյեր, ախչկըներուս խեղճ աներ, հա ըսնա կասեր, որ օր ընցույեր:

Ախչկըներ կպիրեն մախսուս կծակեն չարուխ, գյավազան էլ գյեփին կփնեն, կասեն. - Բաբո՛, քյո չարուխ ծայվե, քյո գյավազան գյեփին առեց:

Խեր կասի. - Ծեր մուր ծեր ճակատ, ես ծե ւաղեկ ուզիցի. ասի. չփսայվեմ, չում իմ ախչըկներ ճոճանան:

Խեր կփսայվի: Խորթ մեր կուգյա փսնակ կըրի, կփնի իրկան ծեռ, կասի. - Դե էլի՛, քյո ախչկըներ ւառ փար, չոլի մը մեչ ըսւյւանի, արուն պե, ես փիսնամ:

Մարթու չարեն կկըփրի, կւառնի ախչկըներ կփանի մեչ ծորի մը, խավքյըմ կպըռնի, վիզ կկփրի, կոռ կզանի գյեփին, կոռփիկ կթալի վերեն. ախչկըներ կպառկցույի խով. ինքյ ուր ծեռն ու դոշ կարընոփի, կպիրի ուր կնգյան նշանց կուփա, կասի. - Դե թո քյո սիրփ խովնա, փարա իմ ախչկըներ մորթիցի:

Ախչկըներ կմնան մեչ չոլ դաշփին: Կուլան, կէրթան դեն, կուգյան դես, կասեն.

Կոռ կա,
Կոռփիկ կա,
Բաբոն չկա:

Մարթըմ կուգյա կասի. - Ախչի՛կ, ինչի՞ կուլաքյ:

Ախչկըներ կասեն.

Կոռ կա,
Կոռփիկ կա,
Բաբոն չկա:

Էփ մարթ կէլնի ախչկըներ կառնի, կէրթա ուր կնգյան կասի. - Կնիկ, էսա ախչկըներ պիփի պախես:

Կնիկ կասի. - Ի՞նչ կանդար ոճլոփ-աղփոփ պան կա՝ պիրես, ինչի՝ վա՞րյք ի կանես:

Մարթու չարեն կկփրի, ուր վարյք փեյի կպախի, կփանի պառավըմ պըռնի, ախչկըներույ առճն բեռլամա կշախի:

Ախչիկ օրըմ կասի. - Պառա՛վ, պառավ, խալամիկ փուր, ես էրթամ ճյուր պիրեմ, ախպյուր փիսնամ:

Կէլնի կէրթա: Թաքավորի լաճ էն գյախ ուր ծին կառնի պիրի ճրելուն: Ախչկան շառավել կզանի մեչ ճրյուն, ծին կխըռփնի, կխըրխընջա, ճյուր չխմե:

Թաքավուրու լաճ որ ախչիկ կփիսնա՝ խելքյ կէրթա: Կփառնա փուն, մոր կասի. - Մարե՛, պառվու փան ախչիկ կամեյի զիկ:

- Բալա՛մ, - կասի, - փյու չե՞ս ամչընա, քյո անուն, էն ֆուքարա ախչիկ, արե քյե վազիրի, թաքավորի ախչիկ ուզեմ:

Մերն ի, չարեն կկփրի, կէլնի կէրթա, կասի. «Վա՜խ, ես իմ անուն, էսա ֆուքարա ախչիկ»: Մյուքյում կկփրի, կէրթա կնշանի, կառնի կպիրի:

Թաժա խարս իբկան կասի. - Քյե ոսկե ճկոթ, ոսկե բըռչամ լաճ ախչիկ պիրեմ:

Խարս կմնա փղով: Ին ամիս, ին օր կթըմմի, ախչիկ աղվորթմայ կպառկի՝ ոսկե ճկոթ, ոսկե բըռչամ լաճ ախչիկ կպիրի:

Խարսի կիսուր կասի. «Կայնի՛ փանեմ թալեմ մեչ խորին, մերն, ուր փղեյնեք, նոր էրթամ փղիս խաբար փամ, նոր կնիկ կընդնեմ, ասեմ՝ քյո կնիկ մեռավ, նոր փսակեմ»:

Խարս ուր ջուխփ կոնդախներով, մեչ մեզրին փաթըթուկ, մեչ խորին կմնա անութի-ծարավ:

Ժամխար կէլնի ժամու փանիս, ժամ կզանի: Կնիկ խորի մեչեն կբոռա կասի.

- Ժամկոչ, ժամ կզանես,
Խաչ քյո իրես կխանես,
Թաքավորու լաճուն պարով անես,
Ասես. Ոսկե ճկոթ, ոսկե բըռչամ
Լաճ ախչիկ ի պիրե,
Մեչ մեզրին ի փաթյութե,
Մեչ խորին ծվարե:

Ժամկոչ կգարզընդի: Մարթըմ կպիրի, էտա ախչիկ ուր կոնդախներով խորիյ կխանի: Կէրթան թաքավորու լաճուն կասեն: Լաճ կուգյա, ուր կնիկ կոնդըխներով կտանի:

Ախչկան խեր կմնա, օրըմ կուգյա: Ախչկըներ ուրենց խեր կճանչընան, խեր ուր ախչկըներ չճանչընա: Ախչիկ ուր խեր կպիրի տուն, կասի. - Պարեկա՛մ, նստի քյե մասալ մ'ասեմ, իմ գյլխու գյացած քյե քսա անեմ:

Ախչիկ կնստի մեկիկ-մեկիկ ուր գյլխու գյացած քսա կանի:

Խեր, ախչկըներ հ'իրար կճանչընան: Խեր կասի. - Էլի էրթանք իմ տուն, տուքյ իմ ախչկըներն եք:

Կառնի կէրթա:

Խորթ մեր կասի. «Իմ իրիկ գի խապեց, չտարավ կորսցուց: Կայնի, ես իմ ծեռնով անեմ»:

Կէլնի ճյուր կտայցուցի, որ ախչկա գյլոխ վլա:

Ախչկըներաց կասի. - Ա՜խ, մեր մեռնի ծեր գյլխուն: Քյանի օր ի որ ծեր գյլոխ սնվլա յի: Էկեքյ ծե լոխկըցուցեմ:

Կտանի սախեն: Եռման ճյուր կլցի ախչկըներաց գյլխու վերեն:

Ախչկըներ կասեն. - Ամա՜ն, մարե, տաքյ ի:

Կասի. - Չէ, քյե մեռնեմ, ի՞նչ տաքյ:

Ճյուր որ քիչ մ'էլ կլցի, աստրծու խրամանքյով ախչիկ կէլնի պուպու, սանդր վեր գյլխուն կթըռնի:

Քյոր քյուրոչ կասի. - Պուպու՛:

Էն էլ կասի. - Ի՞նչ ի, ճուճու:

- Ի՞նչ ես թըխե:

- Ութ, ութ:

- Ո՞ր տեղն ես տըրե:

- Պուտուկ:

Էն թաքավորու լաճու կնիկ որ ճյուր կլցվի վերեն, կէլնի պուպու, կթըռնի, ուր քյուրոչ կասի.

- Ես էլա պուպու, թըռա, էլ էն խոր տուն չէրթաս: Կնա՛ էն պառվու տուն, էնտեղ ապրի: Ես կուգյամ վեր պատին քյե կխասկըցուցեմ, տյու արե ըսկուն մեյ-մեկու կտիսնանքյ:

Էն օրիյ սորա սաղ մնացուկ ախչիկ կէրթա պառվու տուն:

Պուպուն կուգյա վեր պատին: Կասի: - Ճուճու:

Կասի. - Ի՞նչ ի, պուպու:

- Ի՞նչ ես թըխե:

- Ութ, ութ:

- Ո՞ր տեղն ես տըրե:

- Պուտուկ: